ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՋՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԱ-ՈՒՄ

Ժամանակակից շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում տնտեսական ռազմավարության մշակման և, ըստ այդմ, տնտեսության զարգացման և տնտեսական աճի ապահովման գործում մեծ է ներդրումների դերն ու նշանակությունը: Ներդրումներն առավելապես բնութագրվում են Ազգային Հաշիվների Համակարգի (ԱՀՀ) մեթոդական սկզբունքներից ելնելով, քանի որ ԱՀՀ-ն հայեցակարգային հիմք է տնտեսության տարբեր գործոնների բնութագրման համար: Ելնելով, ԱՀՀ 93-ի մեթոդաբանությունից[1], ներդրումները ՀՀ տնտեսության մեջ բնութագրվում են որպես «համախառն կուտակում», (այսինքն, որպես ներքին ներդրումներ կամ ներդրումներ նեղ իմաստով), ինչը ցույց է տալիս ռեզիդենտների կողմից իրական ակտիվներում կատարվող ներդրումների ծավալը[2]:

Համախառն կուտակման կազմի մեջ են մտնում՝

- *հիմնական կապիտալի համախառն կուտակումը,*
- *նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխությունը,*
- *արժեքների զուտ ծեռք բերումը:*

Հիմնական կապիտալի համախառն կուտակումը՝ համախառն կուտակման հիմնական բաղադրիչն է, որն իրենից ներկայացնում է ռեզիդենտների կողմից, հիմնական կապիտալի օբյեկտներում կատարված ներդրումների ամբողջությունը: Դրա ծավալի մեջ են մտնում[3] կապիտալ ներդրումները, կապիտալ նորոգման ծախսերը, հիմնական անասնահոտի արժեքի հավելաճը, գրական գեղարվեստական ստեղծագործությունների

---

[1] Հայաստանի ազգային հաշիվները 1990-1997, Վիճակագրական ժողովածու, Ե, 2000թ. էջեր 36-38, 76-78:

[2] Տնտեսության ներսում արտաքին ներդրումները կազմում են ոչ ռեզիդենտների կողմից կատարվող օտարերկրյա ներդրումները:

[3] ԱՀՀ-ում համախառն կուտակումը ներառում է տասնմեկ բաղկացուցիչներ:

բնօրինակների ստեղծման համար կատարած ծախսերը և այլն:

Համախառն կուտակումը ՀՆԱ-ի ամենահիմնական և փոփոխվող բաղադրիչն է: Ընդ որում, ՀՆԱ-ում համախառն կուտակման նորման չպետք է լինի 25%-ից պակաս, քանի որ այն կարող է հանգեցնել ներդրումային ճգնաժամի[4]:

Համախառն կուտակման կառուցվածքը ՀՆԱ-ի ընդհանուր կառուցվածքում պատկերված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Համախառն կուտակման կառուցվածքը ՀՆԱ-ում

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող բարեփոխումների նախնական փուլում՝ 1990-93թթ, ներդրումների ծավալները բավականին չնչին էին, ինչը բացատրվում է արտադրության անկմամբ և նախատեսվող բարեփոխումների ներքին և արտաքին գործոնների ազդեցության՝ ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացման, էներգետիկ ճգնաժամի հաղթահարման, տնտեսության ծյուղային մասնագիտացման փոփոխության, պաշարներով ապահովման, իրականացվող բարեփոխումների ուղղությունների ընտրության, զուգորդմամբ: Դա նշանակում է, որ 1988թ-ից հետո Հայաստանի

[4] Модельная схема анализа инвестиционной деятельности, М, 1998, ст .2.

Հանրապետությունում տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն են թողել շուկայական հարաբերությունների կայացմանն ուղղված գործընթացները:

1994 թվականից, ներդրումային գործընթացում որոշակի ակտիվություն նկատվեց շնորհիվ մի շարք գործընթացների (մասնավորապես Միջազգային վարկային կազմակերպությունների հետ համագործակցությանը), ինչը, դրականորեն ազդեց ներդրումների նոր ծավալների ներգրավման վրա, տնտեսության ներսում արձանագրելով աշխուժացում: Հանրապետությունում տնտեսության աշխուժացման ժամանակաշրջանում արձանագրվել է ներդրումների կայուն աճ:

1995 թվականից նկատվում է համախառն կուտակման կայուն աճ՝ 1995թ. կազմելով՝ 96.2մլն. դրամ, որը շուրջ երկու անգամ գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը, և կազմում է ՀՆԱ-ի ծավալի 18.4%-ը, իսկ 1996 թվականին այն հասնում է 132.2 մլն դրամի՝ կազմելով ՀՆԱ-ի 20%-ը: Ներդրումային գործունեության ակտիվությամբ պայմանավորված, 1995 թվականից կայուն աճ է նկատվում նաև ՀՆԱ-ի ծավալում (գծապատկեր 2.1):



Գծապատկեր 2. ՀՆԱ-ի, այդ թվում համախառն կուտակման ծավալները՝ 1995-1999թթ

1997-1999թթ. համախառն կուտակման ծավալները նախորդ տարիների համեմատ առավել հուսադրող են (աղյուսակ 1), 1997 թվականին կազմելով՝ 153351մլն դրամ, 1998 թվականին 182825մլն դրամ, 1999 թվականին՝ համապատասխանաբար՝ 192216մլն դրամ, իսկ դրա կառուցվածքում խիստ

գերակշռում են հիմնական կապիտալի համախառն կուտակմանն ուղղված միջոցները, կազմելով՝ 1997թ. 130336 մլն. դրամ, 1998թ՝ 154925մլն. դրամ և 1999թ՝ 162630մլն. դրամ, կամ ընդհանուր ծավալի համապատասխանաբար՝ 83%, 84.7% և 84.6%-ը: Մնացածը բաժին է ընկել նյութական շրջանառու միջոցների և պաշարների փոփոխությանը: Արժեքների զուտ ծեռք բերմանն ուղղվել է համախառն կուտակման չնչին մասը՝ 0.04-0.05%-ը, ուստի կառուցվածքը գնահատելիս, դրա ծավալն ուղղակիորեն ներառված է նյութական շրջանառու միջոցների և պաշարների փոփոխության մեջ:

Աղյուսյակ 1.

Հայաստանի տնտեսության ՀՆԱ-ում համախառն կուտակման կազմը և դինամիկան 1997-1999թթ[5]

(միլիոն դրամ)

	1997	1998	1999
Համախառն ներքին արդյունք ՀՆԱ	804336	955385	987117
որից համախառն կուտակում (ներքին ներդրումներ)	153351	182825	192216
այդ թվում *հիմնական կապիտալի համախառն կուտակում*	130336	154925	162630
դրա ծավալում՝ կապիտալ ներդրումներ	55756.3	75491.5	78719.8
նյութական շրջանառու միջոցների և պաշարների փոփոխություն	23015	27900	29586
արժեքների զուտ ծեռք բերում	249	841	949
ՀՆԱ-ի ինդեքսը, %	103.3	107.3	103.3
համախառն կուտակման ինդեքսը, %	104.9	105.2	101.1
համախառն կուտակման նորման, %	19.1	19.1	19.5
հիմնական կապիտալի համախառն կուտակման նորման, %	16.2	16.2	16.5

Աղյուսակի տվյալներից երևում է, որ տնտեսության ներսում աճի ոչ մեծ ծավալներով նկատվում է ներքին ներդրումների կայունացում: Նշենք, որ տվյալ ժամանակահատվածում Հայաստանի տնտեսության համար մակրոտնտեսական ցուցանիշների կայունացումն առավել կարևոր խնդիր է, քան դրանց էական տատանումները, որն առավել արտահայտված է արտաքին ներդրումների դինամիկայում: Բացի այդ, համախառն կուտակումը ՀՆԱ-ի հիմնական բաղադրիչն է, 1997թ. կազմելով դրա ծավալի՝ 19.1%, 1998թ՝ 19.1%

[5] «Инвестиции финансы и цены стран СНГ в 1995-2000гг», Статистический сборник, Москва 2000г., ст. 21-23.

և 1999թ. համապատասխանաբար՝ 19.5%, և տնտեսության համար հանդիսանում է բավականին կայուն տնտեսական գործոն:

Հիմնական կապիտալի համախառն կուտակումը 1997թ. կազմել է ՀՆԱ-ի 16.2%-ը, 1998թ՝ 16.2%-ը և 1999թ՝ 16.5%-ը: Նյութական շրջանառու միջոցների և պաշարների փոփոխության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1997-99թթ չի փոփոխվել, յուրաքանչյուր տարում կազմելով շուրջ 3%, այնինչ, 1996թ-ին այն հասնում էր 2.1%-ի:

Մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությունը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումները ցույց են տալիս, որ իրականացվող տնտեսական բարեփոխումների գործընթացում որոշակի հաջողություններին զուգահեռ հանրապետությունում տնտեսական կայունության պահպանմանն իրենց տեղն ունեն նաև ճգնաժամային իրավիճակները, որոնք որոշակի ոչ բարենպաստ իրավիճակների հետ համակցմամբ, հանրապետությունը կարող են կանգնեցնել լուրջ ֆինանսական խոչընդոտների առջև, որի արդյունքում Հայաստանը աստիճանաբար կարող է դառնալ ներդրումային-ձեռնարկատիրական գործունեության համար ոչ նպաստավոր և ոչ արդյունավետ տարածաշրջան:

Բարեփոխումների ավելի քան տասը տարվա ընթացքը ցույց տվեց, որ ձեռք բերված մակրոտնտեսական կայունությունը բավարար չէ անհարժեշտ ներդրումների ներգրավման համար: Արտադրության առանձին ոլորտների անկումը, գործազրկության աճը, բանվորների և ինժեներատեխնիկական անձնակազմի որակավորման մակարդակի շարունակական նվազումը անխուսափելիորեն հանգեցրին խնայողությունների կուտակման հնարավորությունների բացառմանը և երկար տարիների ընթացքում ստեղծված արտադրական հզորությունների քայքայմանը:

Ամփոփելով, գալիս ենք այն եզրահանգման, որ տնտեսության կայունացումը բավարար չէ ներդրումային գործունեության ակտիվացման համար: Այս պարագայում արդյունաբերական ավանդական ճյուղերի զարգացումը և աճն ապահովելու համար անհրաժեշտ են մեծածավալ կապիտալ ներդրումներ, որոնք պետք է ուղղվեն սարքավորումների մաշվածքի փոխհատուցմանը:

Հայաստանի տնտեսության անցումային այս փուլում հատկապես կարևորվում է լայնածավալ ներդրումային քաղաքականության մշակումը և իրականացումը: Այն անհրաժեշտ նախադրյալներ կստեղծի մասնավոր ներդրումների իրականացման և ձեռներեցության զարգացման համար: